Տ. ՊԱՐԹԵՒ ԱԲՂ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ի. ԴԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայ Եկեղեցին դարեր շարունակ գործել է ժողովական կառավարման մոդելով. թեեւ վերջնական որոշումները կյանքի են կոչվել հայրապետական տնօրինություններով, սակայն դրանք, կախված իրենց կարեւորությունից, քննարկվել եւ կայացվել են ժողովական կառույցներում: Խորհրդային տարիներին եւս Եկեղեցին ժողովներ գումարելու եւ իր եկեղեցական կյանքը կազմակերպելու հնարավորություն ուներ, սակայն, խոչընդոտները բավական շատ էին: Հայաստանի անկախացումից հետո մեր Եկեղեցին հնարավորություն ունեցավ ազատ գործելու եւ վերականգնելու իր կառավարման այն ավանդական կարգն ու ձեւը, որը դարեր շարունակ ընդունված եւ հաստուկ է եղել Հայ Եկեղեցուն:

Համայնավարության տարիներին Հայ Եկեղեցու՝ Սփյուռքում հաստատված թեմական կառույցների կանոնադրություններում տեղ էին գտել այնպիսի հոդվածներ եւ ձեւակերպումներ, որոնք ամբողջությամբ հակասում էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնական ոգուն եւ ավանդույթին: Հայաստանի անկախացումից հետո անհրաժեշտ էր քայլեր ձեռնարկել ստեղծված այս իրավիճակում՝ լուծումներ գտնելու եւ եկեղեցական կառույցների կանոնադրություններում խմբագրումներ ու փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Ուստի, առաջին քայլերն ուղղված էին Եկեղեցու ժողովական կառույցների կենսունակության բարձրացմանը եւ դրանց աշխատանքների աշխուժացմանը, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ կյանքի կոչել Հայ Եկեղեցու Սահմանադրության մշակման գործընթացը: «*Երբ հոչակուած է կրօնի ազատութիւնը մեր Հայրենիքում, մեր պարտքը նկատենք սրբագրել համայնավար շրջանի եկեղեցաքանդ սիւալները եւ Հայ Եկեղեցու նոր սահմանադրութեան մէջ կարեւորութեամբ ընդգծենք անհրաժեշտութիւնը Եկեղեցու վարչական մարմինների կազմում ներգրաւելու յատկապէս աշխարհական մտաւորական ուժեր...*»[1], - ասում է երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետը Հայ Եկեղեցու նոր սահմանադրություն

1 «Էջմիածին» ամսագիր, 1994, Դ.-Ե., էջ 30:

կազմելու առիթով հղած հայրապետական կոնդակում: Սահմանադրության մշակումը մարդկային բավականաչափ ռեսուրսներ եւ ժամանակ էր պահանջում. այն պետք է իրագործվեր նաեւ *«ժողովական եւ ժողովրդավարական սկզբունքների ոգով»*[2]:

1925 թ., անհանգստացած Գեւորգ Ե. Կաթողիկոսի առողջական վիճակով, Գերագույն հոգեւոր խորհուրդը փորձում է խորհրդային միության կողմից անվավեր ճանաչած «Պոլոժենիան» փոխարինել կաթողիկոսական ընտրությունների նոր կանոնակարգով: 1925-ի հոկտեմբերի 22-ին Գեւորգ Ե. Կաթողիկոսի կողմից առաջին անգամ հաստատվում է կաթողիկոսական ընտրությունների համար կազմված նոր կանոնակարգ, որը սահմանում է ժողովի իրավասությունների շրջագիծը, համաձայն որի՝ ազգային-եկեղեցական ժողովը իրավասու է.

ա. Ընտրել Ամենայն Հայոց Կաթողիկոս.

բ. Ընտրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ.

գ. Հաստատել Ազգային-եկեղեցական սահմանադրությունը.

դ. Քննարկել ու որոշումներ կայացնել կանոնական այլ եւ ընդհանուր հարցերի վերաբերյալ.

ե. Կարգավորել եկեղեցական տնտեսությունը[3]:

Ընդհանրապես, որպես Հայ Եկեղեցու վարչական բարձրագույն մարմին, ազգային-եկեղեցական ժողովը թեեւ իրավասու էր նաեւ քննարկելու եւ որոշումներ կայացնելու Եկեղեցուն հուզող կարեւոր խնդիրների վերաբերյալ, սակայն ժողովները հիմնականում գումարվել են կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու համար:

Հայ Եկեղեցու սահմանադրություն մշակելու որոշում առաջին անգամ կայացվել է 1930-ին, երբ գումարվել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով, հընթացս որի ընդունվել է լուսահոգի Գարեգին եպս. Հովսեփյանցի՝ Հայ Եկեղեցու սահմանադրություն կազմելու վերաբերյալ զեկույցը, ուր արտացոլվել են այն սկզբունքները, որոնք այս կարեւոր փաստաթղթի հիմնաքարն էին լինելու: Դժբախտաբար, Հայաստանում ստեղծված ծանր պայմանները՝ Հայ Եկեղեցու նկատմամբ հալածանքները, հնարավորություն չստեղծեցին շարունակելու այս կարեւոր գործը:

1932 թ. նոյեմբերի 10-ին գումարվել է Ի. դարի Ազգային-եկեղեցական Ա. ժողովը՝ կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու նպատակով: Ժողովին մասնակցում էին 80 հոգեւորական եւ աշխարհիկ անդամներ: Առաջին անգամ ընտրությունները կազմակերպվում են 1925-ին հաստատված

2 Անդ:

3 «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության». Գեւորգ Զ. Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955 թթ.), գիրք Զ., կազմեց Ս. Բեհբուդյանը, Երեւան, 1999, էջ 275:

կանոնակարգի համաձայն: Օրակարգում ընդգրկված էր նաեւ Հայ Եկեղեցու բարեկարգության հարցը, որի շրջանակներում քննարկվում էր Հայ Եկեղեցու սահմանադրությունը:

1941 թ. ապրիլի 10-13-ին տեղի ունեցած Ազգային-եկեղեցական Բ. ժողովը բացարձակապես չի անդրադարձել Հայ Եկեղեցու սահմանադրությանը: Ժողովին մասնակցում էր ընդամենը 49 պատգամավոր: Պատգամավորների մեծ մասը ներկա չէր ժողովին՝ ժամանակի պատերազմական իրավիճակի պատճառով. նույնիսկ որոշվում է հետաձգել կաթողիկոսական ընտրությունները եւ տեղապահ ընտրել Գեւորգ արք. Չորեքչյանին:

1945 թ. հունիսի 16-ին գումարված Ազգային-եկեղեցական Գ. ժողովում վերանայվում եւ հաստատվում է Գեւորգ Ե. Կաթողիկոսի՝ ազգային-եկեղեցական ժողով գումարելու կանոնակարգը[4]: Ժողովին Գերագույն հոգեւոր խորհուրդը ներկայացնում է նաեւ եկեղեցական սահմանադրության մի նախագիծ, որի վերաբերյալ, սակայն, ժողովում քննարկում չի ծավալվում, այլ միայն որոշվում է առաջարկել նորընտիր Գեւորգ Զ. Հայրապետին՝ ստեղծել հատուկ հանձնախումբ, որը կզբաղվի սահմանադրության մշակման աշխատանքներով:

1955 թ. սեպտեմբերի 29-ին գումարված Ազգային-եկեղեցական Դ. ժողովում վերոնշյալ նախագիծը ներկայացվում է որոշ փոփոխություններով. որոշվում է ստեղծել նոր հանձնախումբ՝ արդեն նորընտիր Վազգեն Ա. Հայրապետի տնօրինությամբ, որը կշարունակեր սահմանադրության մշակման աշխատանքները:

Վազգեն Ա. Հայրապետը առաջին իսկ օրվանից մեծ կարեւորություն է ընծայում սահմանադրության մշակման գործին:

1962 թ. հուլիսի 7-ին, առաջին անգամ ոչ կաթողիկոսական ընտրությունների համար, գումարվում է Ի. դարի Ազգային-եկեղեցական Ե. ժողովը, որի օրակարգում, ի շարս այլ հարցերի, ընդգրկված էր նաեւ Հայ Եկեղեցու կանոնագրքի մշակման հարցը[5]:

Հետագա տարիների ընթացքում այս ուղղությամբ կատարվել է մեծ աշխատանք:

Լուսահոգի Վազգեն Ա. Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նոր սահմանադրություն կազմելու առիթով հղած հայրապետական կոնդակում գրում է. *«...Շուրջ 20 տարիների ընթացքում յանձնաժողովներ կազմեցինք ծանօթ եւ ձեռնհաս բարձրաստիճան հոգեւորականներից, որոնք կազմեցին եկեղեցական սահմանադրութեան նախագծեր՝ իրարից ոչ շատ տարբերուող, խարսխուած մեր Եկեղեցւոյ կանոնաց եւ աւանդութեանց հիմքերի վրայ, ժողովական եւ ժողովրդավարական*

4 Տե՛ս անդ, էջ 269-270:

5 Տե՛ս «Էջմիածին», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1962, էջ 11-15:

սկզբունքների ոգով, որոնք բնորոշ են Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատմականօրէն նուիրագործուած կարգ ու կանոնի եւ հայ հաւատացեալ ժողովրդի հոգեբանութեանը»[6]:

Երջանկահիշատակ Հայրապետն իր սրբատառ կոնդակի վերջում սահմանում է նաեւ այն ընթացակարգը, որի համաձայն պետք է հաստատվեր Հայ Եկեղեցու Սահմանադրությունը:

Ըստ այդմ՝

1. Հայ Եկեղեցու սահմանադրության մշակման հանձնախումբը պատրաստած աշխատանքը պետք է ներկայացնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

2. Ամենայն Հայոց Կաթողիկոսը նվիրապետական աթոռների գահակալների ու եպիսկոպոսների մասնակցությամբ պետք է գումարի ժողով՝ քննարկելու ներկայացված նախագիծը եւ եզրակացություն տալու.

3. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այս մասին պետք է հայտնի Գերագույն հոգեւոր խորհրդին, որից հետո հարմար ժամանակ տնօրինի ազգային-եկեղեցական ժողովի գումարումը՝ ի կանոնական հաստատումն սահմանադրության.

4. Հաստատումից հետո Կաթողիկոսը հայրապետական կոնդակով հրապարակում է սահմանադրությունը՝ ի գործածություն[7]:

1994 թ. ապրիլի 22-ին ահա այս հանգրվանին էր հասել Հայ Եկեղեցու սահմանադրության մշակման գործընթացը:

1995 թ. ապրիլի 3-5-ը գումարվում է Ազգային-եկեղեցական Զ. ժողովը, որը ՀՀ անկախացումից հետո առաջինն էր: Ժողովին 421 պատգամավորներից մասնակցում էին 398-ը: Ժողովի օրակարգում ընդգրկված էր կաթողիկոսական ընտրությունների հարցը: Քննարկվում են նաեւ այլ հարցեր, ի մասնավորի՝ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ընտրության հարցը: Անդրադառնալով սույն հարցին՝ նշվում է, որ թեեւ համաձայն ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրության՝ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին ընտրում է ազգային-եկեղեցական ժողովը, սակայն փորձը ցույց է տալիս, որ որեւէ խորհրդի ընտրությունից առաջ հարկ է նախ ստեղծել (**nomination committee**) նշանակման կոմիտե՝ հաշվի առնելով նաեւ, որ այն անձինք, որոնք պետք է ընտրվեն Գերագույն հոգեւոր խորհրդի կազմում, ժողովի անդամներին ծանոթ չեն: Հետեւաբար որոշվում է, որ *«Վեհափառ Հայրապետը խորհրդակցելու է Ամենապատիւ Պատրիարքը Հայրերի հետ՝ նշանակելու համար Գերագույն հոգեւոր խորհրդի նոր կազմը՝ մինչեւ նոր ազգային-եկեղեցական ժողովի գումարումը»*[8]:

---

6 «Էջմիածին», 1994, Դ.-Ե., էջ 30:

7 «Հայրապետական կոնդակ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու նոր սահմանադրություն կազմելու առիթով», Ս. Էջմիածին, 1994, ապրիլ 22, հմր. 2037:

8 «Արձանագրություն Ազգային-եկեղեցական ժողովի», 1995, 5 ապրիլի, Դ. նիստ:

Ժողովի ընթացքում թեեւ անդրադարձ է եղել նաեւ Հայ Եկեղեցու սահմանադրության մշակմանը, սակայն դատելով ժողովի արձանագրությունից՝ կարելի է եզրակացնել, որ հարցի առնչությամբ որեւէ գործնական քայլ չի ձեռնարկվել:

1999 թ. հոկտեմբերի 27-28-ին գումարված Ազգային-եկեղեցական Է. ժողովին 455 պատգամավորներից մասնակցում էին 440-ը: Այս ժողովի օրակարգում նույնպես ընդգրկված էր կաթողիկոսական ընտրության հարցը: Ընտրության հաջորդ օրվա նիստը, որտեղ, ընդունված կարգի համաձայն, պետք է քննարկվեին Եկեղեցուն հուզող այլ կարեւոր հարցեր եւս, ՀՀ խորհրդարանում հոկտեմբեր 27-ին տեղի ունեցած հայտնի ոճրագործության պատճառով ամբողջությամբ չի գումարվում: Նիստը տեւում է կարճ, որի ընթացքում անդրադարձ է արվում նախորդ օրը խորհրդարանում տեղի ունեցած ոճրագործությանը, ընթերցվում է նորընտիր Հայրապետի ցավակցական գիրը՝ ուղղված ՀՀ նախագահին եւ համայն հայ ժողովրդին: Նկատի ունենալով Հայ Եկեղեցու սահմանադրության պատրաստման կարեւորությունը՝ օրակարգում ընդգրկվում է միայն այս հարցը, որի վերաբերյալ, ըստ էության, լայն քննարկում չի ծավալվում, այլ կայացվում է մի կարեւոր որոշում: Ազգային Եկեղեցական ժողովի կազմակերպման եւ Հայ Եկեղեցու սահմանադրության մշակման հանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Վաչե արք. Հովսեփյանն առաջարկում է, *«որ նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2000 թ. հունիս ամսվա մեջ Ներկայացուցչական ժողով հրավիրի՝ բոլոր եպիսկոպոսների եւ թեմական խորհուրդներից մեկական ներկայացուցչի մասնակցությամբ, եւ լիազորի ներկայացուցչական ժողովին, որ այն Նորին Սրբության նախագահությամբ հանգամանորեն նկատի առնի Եպիսկոպոսաց ժողովից բերված հարցերը եւ ներկայացված կանոնադրության վերջին նախագիծը, եւ այն վավերացնելուց հետո ուղարկի բոլոր թեմերին՝ առ ի գործադրություն»*[9]:

Վաչե Սրբազանի վերոնշյալ առաջարկը դրվում է քվեարկության, որի արդյունքում որոշվում է նորընտիր Հայրապետի նախագահությամբ՝ 2000 թվականին գումարել Եպիսկոպոսաց եւ թեմական խորհուրդներից լիազորված պատվիրակների համատեղ ժողով՝ քննության առնելու Հայ Եկեղեցու Սահմանադրության նախագիծը: Թեեւ այս ժողովի գումարումը նախատեսված էր 2000 թվականին, բայց այն հնարավոր եղավ գումարել միայն 2003-ին, որի օրակարգում, սակայն, զարմանալիորեն տեղ չգտավ սահմանադրության նախագծի քննարկումը:

Վերը շարադրյալից կարելի է հետեւություն անել, որ ազգային-եկեղեցական ժողովները հիմնականում գումարվել են կաթողիկոսական ընտրությունը-

9 «Էջմիածին», 1999, Ժ.-ԺԱ., էջ 69:

ների համար: Այդպես է եղել եւ 1932 թվականին, երբ հրավիրվեց Ի. դարի ազգային-եկեղեցական առաջին ժողովը, եւ հետագայում՝ 1941, 1945, 1955, 1995, 1999 թվականներին, բացառությամբ՝ 1962-ի, երբ երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետը կաթողիկոսական կոնդակով հրավիրում է ազգային-եկեղեցական ժողով, որի օրակարգում, ինչպես արդեն վերը անդրադարձանք, չկար կաթողիկոսի ընտրության հարց:

Ինչպես տեսնում ենք, Հայ Եկեղեցու կարեւոր հարցերից մեկը՝ սահմանադրության մշակումը, գործնականում հնարավոր եւ արդյունավետ չի եղել քննարկել Ի. դարում գումարված ազգային-եկեղեցական ժողովների ընթացքում: Այդ է պատճառը, որ 1999 թ. ազգային-եկեղեցական ժողովը որոշում է առաջարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հրավիրել ներկայացուցչական ժողով, որը հանգամանորեն քննության կառնի Հայ Եկեղեցու սահմանադրության նախագիծը եւ գլուխ առ գլուխ կներկայացնի ազգային-եկեղեցական ժողովի վավերացմանը:

РЕЗЮМЕ

Национально-церковный Собор Армянской св. Апостольской церкви является ее верховным органом, правомочным рассматривать и принимать решения по наиболее важным вопросам, относящимся к Армянской Церкви. В XX в. Соборы, за исключением Собора 1927 г., проводились для организации выборов Католикоса.

22 декабря 1925 г. Католикос Геворг Пятый впервые утверждает новый порядок выборов католикоса.

В XX в. состоялись 7 Национально-церковных Соборов, в распорядке дня которых был также вопрос подготовки Уложения (конституции) Армянской церкви.

Впервые решение о разработке Уложения Армянской Церкви было принято в 1930 г. на созванном Верховном духовном собрании, на котором был принят доклад светлой памяти епископа Гарегина Овсепянца о составлении Уложения Армянской Церкви. В нем были представлены те положения, которые легли в основу этого важного документа.

В период с 1932 по 1999 гг. была проделана огромная работа по подготовке Уложения Армянской Церкви. Блаженной памяти Патриарх Вазген Первый в патриаршем кондаке от 22 апреля 1994 г. в связи с составлением нового Уложения Армянской св. Апостольской Церкви определяет порядок, в соответствии с которым должно было утверждаться новое Уложение.

3-5 апреля 1995 г. в ходе Шестого Собора, первого в истории независимой Армении, в связи с выбором членов Верховного духовного собрания принимается решение, что “ Верховный Патриарх проведет совещание с Высокочтимыми Отцами-Патриархами для назначения нового состава

Верховного духовного собрания до созыва Национально-церковного Собора".

Национально-церковный Собор 27-18 октября 1999 г. принимает решение предложить Католикосу Всех Армян созвать представительское собрание, которое всесторонне рассмотрит проект Уложения Армянской Церкви и по главам представит его на утверждение Национально-церковного Собора.

SUMMARY

National-Ecclesiastical Assembly is the highest body of the Armenian Apostolic Holy Church, which is authorized to discuss and make decisions concerning key issues that bother the Church. In the 20th century, the assemblies were mainly convened, except for the one of 1962, for the purpose of organizing elections of the Catholicos.

On October 22, 1925, Gevork V Catholicos for the first time adopted new regulations formulated for elections of the Catholicos.

In the 20th century, seven national-ecclesiastical assemblies were convened and their agendas included also the issue of preparing the constitution of the Armenian Church.

Decision of elaborating the constitution of the Armenian Church for the first time was made in 1930, when a meeting of the Supreme Spiritual Council was convened. During the meeting, the report of late Bishop Karekin Hovsepiants on compiling the constitution of the Armenian Church was adopted, which pointed out the principles that would be the cornerstones of this important document.

From 1932 to 1999, a huge work was done in the direction of preparing the Constitution of the Armenian Church. In his encyclical, issued on April 22, 1994 on the occasion of compiling a new constitution of the Armenian Apostolic Holy Church, Catholicos Vasken I of blessed memory defined the procedure, according to which the Constitution of the Armenian Church would be adopted.

On April 3-5, 1995, during the sixth National-Ecclesiastical Assembly convened for the first time after the independence of the Republic of Armenia, a decision was made concerning the election of members of the Supreme Spiritual Council, "His Holiness will consult with Armenian Patriarchs of Jerusalem and Constantinople for appointing a new staff of the Supreme Spiritual Council prior to the convention of a new national-ecclesiastical assembly".

The National-Ecclesiastical Assembly convened on October 27-28, 1999 decided to suggest the Catholicos of All Armenians inviting a representative assembly, which would discuss in details the project of the Constitution of the Armenian Church and would present it chapter by chapter to the ratification of the National-Ecclesiastical Assembly.